ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2– ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/62» ծածկագրով ընթացակարգի արդյունքում 20.10.2015թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/62-1 պայմանագիրը 16.12.15թ-ին մասնակի լուծելու մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: *Մասնակցի դիմումը՝* հիմք ընդունելով ՀՀ կառավարության 11.02.2011թ. N168-Ն որոշման 36-րդ կետի 9-րդ ենթակետը 66 500 կգ «կարտոֆիլ» ապրանքատեսակի մասով Պայմանագիրը երկկողմանի մասնակի լուծելու առաջարկով:

Փոփոխության նկարագրություն: N ՇՀԱՊՁԲ-7/62-1 *պայմանագիրը մասնակի լուծելու մասին.*

Հիմք ընդունելով Պայմանագրի 9.7 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագիրը լուծել մասնակի՝ Գեղարքունիք տարածաշրջանից 37 500 կգ և Վայոց Ձորի տարածաշրջանից 29 000 կգ «կարտոֆիլ» ապրանքատեսակի մասով: Լուծման արդյունքում Պայմանագրի գինը նվազում է 6 691 000 (վեց միլիոն վեց հարյուր ինսունմեկ հազար) ՀՀ դրամով և կազմում է 26 404 622 (քսանվեց միլիոն չորս հարյուր չորս հազար վեց հարյուր քսաներկու) ՀՀ դրամ:

Փոփոխության հիմնավորում: Չի հակասում ՀՀ կառավարության 10.02.11թ. 168-Ն որոշման 60-րդ կետին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տ.Բաղդասարյան:

Հեռախոս՝ *010-29-44-18*:

Էլ. փոստ՝ ***t.baghdasaryan@mil.am***:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

N ՇՀԱՊՁԲ-7/62-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

16 .12.2015թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և Ա/Ձ Անուշ Կարապետյանը, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասը, 20.10.2015թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/62-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.7 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 11.02.2011թ. N 168-Ն որոշման 36-րդ կետի 9-րդ ենթակետը, ինչպես նաև Պայմանագրի 9.7 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագիրը լուծել մասնակի՝ Գեղարքունիք տարածաշրջանից 37 500 կգ և Վայոց Ձորի տարածաշրջանից 29 000 կգ «կարտոֆիլ» ապրանքատեսակի մասով:

1.2 Սույն Համաձայնագրի 1.1 կետով նախատեսված լուծման արդյունքում Պայմանագրի գինը նվազում է 6 691 000 (վեց միլիոն վեց հարյուր հինսունմեկ հազար) ՀՀ դրամով և կազմում է 26 404 622 (քսանվեց միլիոն չորս հարյուր չորս հազար վեց հարյուր քսաներկու) ՀՀ դրամ:

2.Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման /կնքման/ պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.4 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՁՈՒ թիկունքի վարչությունը

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գանձապետական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 00867415 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ- ՆՏԱ դեպարտամենտի պետ	Ա/Ձ Անուշ Կարապետյան Ք. Երևան Արցախի 18շ, բն. 119 «Կոնվերսբանկ» ՓԲԸ Հ/Հ 1930056139900100 ՀՎՀՀ 80035737
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ